ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԸՀԱՇՁԲ-16/11

ք. Երևան 22.09.2016 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության <Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկը, ի դեմս տնօրեն Մ. Քյուրքչյանի, որը գործում է ՀՀ քաղաքաշինության նախարարության <Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ> պետական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և համատեղ գործունեության պայմանագրով (այսուհետև՝ Կոնսորցիումով) հանդես եկող հետևյալ կազմակերպությունների՝ <<Արա և Այեմնիկ>> ԲԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Գրիգորյանի, <<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Խաչատուրյանի որոնք գործում են Ընկերությունների կանոնադրությունների հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով և տեխնիկական բնութագրով նախատեսված՝ **ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի մարզադպրոցի ավարտման համար լրացուցիչ շինարարական** աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 10.12.2016 թ.:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում,

ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ավարտի օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 4 օրինակ (Հավելված N 4) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 20 օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության

2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կարգով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:

4.7 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 47033380 (Քառասունյոթ միլիոն երեսուներեք հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 7838897 (Յոթ միլիոն ութ հարյուր երեսունութ հազար ութ հարյուր իննսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20.12.2016 թ. ՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.5 Սույն պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի տեսակի սահմանված միավոր գինն է.

ՎԳՏ - ծավալաթերթ-նախահաշվով սահմանված առանձին տեսակների (տողերի) դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի

կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող Աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.5 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

8.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կապալառուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.9 Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն

պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

Պ ա տ վ ի ր ա տ ու

ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011087112, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն ---------- Մ. Քյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք. Էջմիածին, Նար-Դոսի 3,
<<Արդշինբանկ>> ՓԲԸ,
<<Էջմիածին>> մասնաճյուղ
ՀՀ 247590129513-0040,
ՀՎՀՀ 04704351

Տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ

<<Խաչատուրյանի Բիլդինգ
Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն ---------- Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 1.1
22.09.2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/11 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի մարզադպրոցի ավարտման համար լրացուցիչ շինարարական աշխատանքների

1	Շինարարության բնութագիրը	Մարզադպրոցի հիմնանորոգման-վերակառուցման աշխատանքների ավարտման (թիվ 2 և թիվ 3 մասնաշենքերի վերազինման) լրացուցիչ միջոցառումներ:
2	Տվյալներ հիմնական կառույցի վերաբերյալ	Մարզադպրոցի ընդհանուր մակերեսը՝ 6253.0 քմ: Միահարկ նքի (թիվ 3) արտաքին չափերն են՝ 34.2x24.0մ, հարկի բարձրությունը Երկհարկանի մ/շ (թիվ 2) արտաքին չափերն են՝ 18.5x24.5մ, հարկի բարձրությունը 3.3մ և 6.6մ: Օբյեկտն իրականացվել է ՀՀ 2009-2014 թվականների պետական բյուջեների միջոցների հաշվին: 2009-2014 թվականների ընթացքում գրեթե ամբողջությամբ վերակառուցվել-հիմնանորոգվել են մարզադպրոցի բոլոր մասնաշենքերը, իրականացվել են ծածկի սալերի, սյուների ուժեղացման աշխատանքներ, մասնաշենքերի ներքին և արտաքին նոր հաղորդակցուղիներ, իրականացվել են ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ:
3	Ճարտարապետահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներ	Հատկացված լրացուցիչ ֆինանսական միջոցների շրջանակներում նախատեսվում են ավարտական օբյեկտի՝ ***թեթև աթլետիկայի միահարկ մարզադահլիճային մասնաշենքի*** հանդիսատեսի (պլաստիկ) աթոռներ, պատուհանների ճաղաշար, տրիբունայի կավրոլինե հատակներ, բասկետբոլի վահանների կոնստրուկցիաներ, մինիֆուտբոլի դարպասներ, ***երկհարկանի մասնաշենքի ծանրամարտի դահլիճի*** փայտե կավարամած, հայելիներ, մարզական ներքնակներ: Նախատեսվում են նաև. ***Արտաքին հաղորդակցուղիներ՝*** արտաքին գազամատակարարման և էլ.մատակարարման համակարգերի (այդ թվում էլ.սնուցման ուժային գծի) կառուցման մնացորդային աշխատանքներ: ***Տարածքի բարեկարգման և արտաքին խաղահրապարակների կառուցման աշխատանքներ՝*** տարածքի կանաչապատում, ասֆալտապատում, սպորտային խաղահրապարակների կառուցում ռետինեբիտումային ծածկույթով, արտաքին նստարանների տեղադրում, շուրջ 60գծմ երկարությամբ քարե ցանկապատի իրականացում՝ օբյեկտի շահագործումը, սահմանված կարգով ապահովելու համար: Նշված աշխատանքները կազմում են շինօբյեկտի ամբողջ ծավալի շուրջ 13.0%-ը :

4	Տրվող նախագծի կազմը	Աշխատանքային նախագիծ, փորձաքննության դրական եզրակացություն, ծավալաթերթ /փաստաթղթային և էլեկտրոնային տարբերակներով/
5	Ներկայացվող հիմնական պահանջներ	Շինարարական աշխատանքներն իրականացնել նորմատիվ փաստաթղթերով սահմանված շինարարական նորմերի համաձայն: Աշխատանքների ավարտը նախատեսել՝ 10.12.2016թ

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ՇԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011087112, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն ..... Մ. Բյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք. Էջմիածին, Նար-Դոսի 3,
<<Արդշինբանկ>> ՓԲԸ,
<<Էջմիածին>> մասնաճյուղ
ՀՀ 247590129513-0040,
ՀՎՀՀ 04704351

Տնօրեն ..... Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Խաչատուրյանի Բիլդինգ
Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն ..... Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 2
22.09.2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/11 գնման պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի մարզադպրոցի ավարտման համար լրացուցիչ շինարարական աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Հատակներ, Ծանրաձողի հատակի կառուցում,Բասկետբոլի վահանի կառուցում, Մնացորդային աշխատանքներ.	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	01.12.2016թ.
2	Մետաղական մինի ֆուտբոլի դարպասներ,Մետաղական ցանկապատ,Քարե պարիսպ,Բարեկարգում,Բասկետբոլի վահանի կանգնակ,Ֆուտբոլի դարպաս	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	10.12.2016թ.
3	Գույք և կահավորում	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	01.12.2016թ.
4	Արտաքին գազատար	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	10.12.2016թ.
5	Հրդեհային ազդարարման ցանց	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	01.12.2016թ.
	ԸՆԴԱՄԵՆԸ	Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրը	10.12.2016թ.

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ՇԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 900011087112, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն ---------- Մ. Քյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք. Էջմիածին, Նար-Դոսի 3,
<<Արդշինբանկ>> ՓԲԸ,
<<Էջմիածին>> մասնաճյուղ
Հ/Հ 247590129513-0040,
ՀՎՀՀ 04704351

Տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն ---------- Ա. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված թիվ 3
22.09.2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/11 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2016 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի մարզադպրոցի ավարտման համար լրացուցիչ շինարարական աշխատանքներ	-	-	-	-	-	-	-	-	36345800	47033380	47033380	47033380	47033380

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ծրագրեր>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011087112, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն ---------- Մ. Քյուրքչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք. Էջմիածին, Նար-Դոսի 3,
<<Արդշինբանկ>> ՓԲԸ,
<<Էջմիածին>> մասնաճյուղ
ՀՀ 247590129513-0040,
ՀՎՀՀ 04704351

Տնօրեն ---------- Ա. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Խաչատուրյանի Բիլդինգ Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն ---------- Ա. Խաչատրյան

Հավելված թիվ 4
«22» 09 2016թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ԲԸՀԱՇՁԲ-16/11 գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված թիվ 4.1
22 .09.2016 թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/11 գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Պատվիրատու) և
(Պատվիրատուի անունը)
----------ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. ------ -ին կնքված N --------
(Կապալառուի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ---------- -ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված թիվ 1
22.09.2016 թ. կնքված աշխատանքների կատարման
թիվ ԲՀՀԱՇՁԲ-16/11 գնման պայմանագրի

Ծավալաթերթ-նախահաշիվ

ՀՀ Արագածոտն մարզի ք.Աշտարակի մարզադպրոցի ավարտման համար լրացուցիչ աշխատանքներ

N/N	Աշխատանքների և ծախսերի շիфրը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
1	2	3	4	5	6	7
		Հատակներ				
1	11-205	Հետերագեն ՊՎՔ 4,5մմ հաստ 1մմ պաշտպանիչ շերտով ծածկույթի իրականացում սոսնձի հետ միասին	100 քառ.մ	9.28	1068.88	9919.18
5	11-205	Հետերագեն ՊՎՔ 2մմ հաստ 0,7մմ պաշտպանիչ շերտով ծածկույթի իրականացում սոսնձի հետ միասին	100 քառ.մ	1.52	867.57	1315.24
9	11-221	Հատակի ծածկույթի իրականացում լավորակ կերամո-գրանիտե սալիկներով միջանցքում և աստիճանահարթակներում	քառ.մ	4.70	10.31	48.45
12	11-252	Շրիշակների իրականացում կերամոգրանիտե սալիկներով h-100մմ	գծ.մ	5.03	0.83	4.19
		Ծանրածողի հատակի կառուցում			0.00	0.00
15	11-186 կիրառ	Փայտե չորսուների տեղադրում /2,8*3*4մ/150*60մմ	քառ.մ	34.80	32.97	1147.41
17		Գամմասեղ	կգ	16.83	1.14	19.16
18		Տափողակ	հատ	32.00	0.60	19.36
19		Մանեկ	հատ	32.00	0.44	14.05
20		Ոետինե սալ 1500*600մմ	քառ.մ	7.20	6.05	43.56
		Բասկետբոլի վահանի կառուցում				
26	9-69	Մետաղական տարածական ֆերմայի մոնտաժում	տ	0.97	60.68	58.74
30		Ֆերմայի արժեքը	տ	0.97	546.11	528.63
31	Շուկա	Բասկետբոլի վահանի արժեքը օղակի և ցանցի հետ միասին /տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ/	հատ	2.00	65.71	131.43
32	33-82	Մետաղական կոնստրուկցիաների ներկում 2 անգամ	տ	0.97	12.16	11.78
		Մետաղական մինի ֆուտբոլի դարպասներ				
35	Շուկա	Մետաղական ֆուտբոլի դարպասի տեղադրում /տեղափոխումը և տաղադրումը ներառված է գնի մեջ 2մ*3մ/	հատ	2.00	56.65	113.30
36	Շուկա	Դարպասի ցանց 2*3*1մ	հատ	2.00	6.37	12.75
		Հրդեհային ազդարարման ցանց				
		Սոնտաժ				
1	g10-743-2	Հրդեհային ազդարարման պուլտ	հատ	1.00	1.95	1.95
2	g10-743-2	Ազդարարիչ սարքավորում	հատ	18.00	1.95	35.08

N/N	Աշխատանքների և ծախսերի հիմքը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
3	g10-743-3	Ջերմային ազդարարիչ սարք	հատ	38.00	1.95	74.05
4	10-975	Ճյուղավորման տուփ	հատ	5.00	0.82	4.10
5	11-582-1	Միացնող տուփ	հատ	3.00	1.69	5.08
6	21-103	Պղնձե հաղորդալար	100 գծ.մ	2.50	17.21	43.02
7	8-117-4	Վինիպլաստից խողովակներ մինչև 50mm	100 գծ.մ	0.20	136.28	27.26
8	8-402-2	Թաքնված լարանցում	100 գծ.մ	0.50	27.91	13.96
		Նյութեր				
9	շուկա	Հրդեհային ազդարարման պուլտ 10*1	հատ	1.00	197.82	197.82
10		Ազդարարիչ սարքավորում ДИП-2	հատ	17.00	3.99	67.88
11		Ջերմային ազդարարիչ սարք ИП-105	հատ	38.00	3.02	114.94
12		Ճյուղավորման տուփ УК-2П	հատ	5.00	0.10	0.48
13		Միացնող տուփ КСК-8 *1	հատ	2.00	0.12	0.24
14		Միացնող տուփ КСК-16 *1	հատ	1.00	0.18	0.18
15		Ազդանշանային սարք УС-0,2	հատ	2.00	6.55	13.09
16		Էլեկտրական զանգ ЗВП	հատ	1.00	4.23	4.23
17		Մարտկոց 12վ/24/	հատ	1.00	18.30	18.30
18		Շիկացման լամպ Բ 220*230*25	հատ	1.00	0.18	0.18
19		Պղնձե հաղորդալար LSվ-Պ 0,6	գծ.մ	200.00	0.07	14.81
20		Մալուխ ԿՎՎԳ-19*1	գծ.մ	20.00	0.52	10.37
21		Պղնձե հաղորդալար ՊՊՎ-2*2,5	գծ.մ	50.00	0.25	12.34
22		Վինիպլաստե խողովակ d=20մմ	գծ.մ	20.00	0.31	6.17
		Մնացորդային աշխատանքներ				
		Հատակներ				
1		Կավրոլինե ծածկույթի իրականացում որակյալ 6,5մմ հաստ «Tapison forte »տիպի /տեղափոխումը,տեղադրումը ներառված է գնի մեջ/	քառ.մ	144.50	1.48	213.75
		Շարժական մետաղական աստիճան			0.00	0.00
2	կալկուլ	Շարժական մետաղական աստիճան	գծ.մ	2.00	64.86	129.73
3	կալկուլ	Տրիբունայի ձախ և աջ դիմային ճաղաշար	գծ.մ	32.40	5.54	179.54
4	կալկուլ	Տրիբունայի կողային ճաղաշար	գծ.մ	13.80	6.97	96.17
		Պլաստմասե նստարանների տեղադրում			0.00	0.00
5	23-45	Մետաղական պրոֆիլների ամրացման համար նստարանների տակ վերտիկալ գայլիկոնում d=20մմ	100 հատ	1.00	16.72	16.72
6	35-37-57	Սնցքերի ներարկում պոլիմեր -ցեմենտե շաղախով	խոր.մ	0.01	68.08	0.68
7	6-83	Պրոֆիլների արժեքը 25*50մմ	գծ.մ	135.00	0.66	88.53
		Արտաքին գազատար				
		1.Հողային աշխատանքներ				
1	1-1587	Խրամատի մշակում IV կարգի բնահողում մեխանիզմով բառնալով ավտոինքնաթափերի վրա	խոր.մ	58.00	2.44	141.29
2	310-3	Տեղափոխում մինչև 7կմ	տ	24.75	2.08	51.52
3	6-1	Գազատարի մետաղական հենարանների և ՊԳԿԿ-ի տակ բետոնե բարձիկների պատրաստում B-15 դասի բետոնից	խոր.մ	3.75	32.33	121.22
		2.Գազամատակարարում				
4	23-1	Խրամատի մեջ ավազե նախապատրաստական շերտ 10սմ հաստ	խոր.մ	4.00	4.30	17.19
5	14-49	Պողպատե հենարանների տեղադրում	տ	0.80	78.31	62.88

N/N	Աշխատանքների և ծախսերի հիմք	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
6		Պողպատե խողովակների արժեքը d=89*4մմ	գծ.մ	10.00	3.01	30.13
7		Պողպատե խողովակների արժեքը d=76*3մմ	գծ.մ	87.00	1.99	173.48
8		Միջադիրներ հենարանների 10*30մմ թերթավոր պողպատից	կգ	46.00	0.41	18.76
9		Խողովակների տակ պողպատե ճարմանդներ	կգ	7.00	0.40	2.79
10	22-66 գ-0,4	Պողպատե գազատար խողովակների ապա մոնտաժում D=89*4մմ	գծ.մ	25.00	0.24	6.08
11	22-66	Պողպատե գազատար խողովակների մոնտաժում D=89*4մմ /առանց արշեթի/	գծ.մ	25.00	0.61	15.20
12	22-66	Պողպատե գազատար խողովակների մոնտաժում D=76*3,5մմ	գծ.մ	270.00	2.82	760.96
13	22-65	Պողպատե գազատար խողովակների մոնտաժում D=20մմ	գծ.մ	30.00	1.04	31.30
14	22-65	Պողպատե գազատար խողովակների մոնտաժում D=15մմ	գծ.մ	15.00	1.09	16.38
15	22-384	Մետաղական սողնակների տեղադրում D=80մմ	հատ	2.00	44.79	89.59
18	25-473	Կարերի ստուգում գամմա ճառագայթով	կար	3.00	8.91	26.74
19	15-614	Մետաղական գազատարի յուղաներկում կրկնակի անգամ	քառ.մ	170.00	1.07	181.83
22		Պարոնիտե միջադիրների տեղադրում	քառ.մ	2.00	0.48	0.97
23	24-353	Միացում գազատարին1. d=76/219մմ	տեղ	1.00	20.27	20.27
26	24-348	Միացում գազատարին d=20/76մմ	տեղ	1.00	8.57	8.57
29	24-399	ՊԳԿԿ գազահաշվիչ հանգույցով ջերմաստիճանային կոռեկտորով TZ-150G-650	հատ	1.00	1574.85	1574.85
30	24-399	ՊԳԿԿ առանց գազահաշվիչ հանգույցի GS74-H	հատ	1.00	172.20	172.20
31		Ճնշման կարգավորիչ GS-64-22	հատ	1.00	38.26	38.26
32		Գազի հաշվիչի մոնտաժում մետաղական արկղի մեջ GS-10	կ-տ	1.00	126.99	126.99
33	9-121	Էլ.լարերի տակ գազատարի ցանցային պաշտպանիչ պանելի տեղադրում	տ	1.44	60.68	87.38
36		Սենյակնակ 50*5	գծ.մ	123.60	1.48	183.35
37		Կանգնակ պողպատե խողովակից d=76*3մմ	գծ.մ	88.80	1.99	177.06
38		Թերթավոր մետաղ 100*100*6	տ	0.23	408.11	92.23
39		Ցանց 2*2,9 9հատ	քառ.մ	52.20	0.51	26.65
40	25-428	Պողպատե գազամուղի փորձարկում և փչամաքրում	գծ.մ	415.00	1.83	757.43
		Մետաղական ցանկապատ				
1	7-317	Մետաղական ճաղաշարի տեղադրում փոսորակների փորումով և հիմքերի բետոնացումով B-12,5	գծ.մ	124.00	5.62	696.46
3	Կալկ 1	Պողպատից ճաղաշար մետաղական ցանցից և կանգնակներից	գծ.մ	124.00	18.06	2239.97
4	15-614	Պողպատե ճաղաշարի յուղաներկում 2 անգամ լավորակ	քառ.մ	124.00	1.07	133.21
		Քարե պարիսպ				
		1. Հողային աշխատանքներ				
1	1-951	Բնահողի մշակում ձեռքով մինչև 20մ տեղափոխումով	խոր.մ	20.00	2.44	48.72
2	23-226	Ավելորդ բնահողի բարձում ձեռքով ավտոհնքնաթափի վրա	տ	8.00	0.40	3.19
3	310-7	Տեղափոխում մինչև 7կմ	տ	8.00	2.08	16.65
4	1-958	Բնահողի հետլիցք ձեռքով տեղափոխելով 20մ	խոր.մ	4.00	1.00	3.99
5	1-1184	Բնահողի տոփանում պնևմատոփանով	խոր.մ	4.00	0.24	0.97

N/N	Աշխատանքների և ծախսերի շիфրը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
		2.Հիմքեր				
6	6-20	Խամքարբետոնե ժապավենաձև հիմքերի իրականացում B –12,5 դասի բետոնից	խոր.մ	11.20	42.66	477.82
		3.Պատեր				
10	8-163	Պատերում շարք կանոնավոր ձևի տուֆ քարով	խոր.մ	28.00	20.52	574.46
13	8-59	Շարվածքի ամրանավորում մետաղական ցանցով եզ- 4,5	տ	0.20	509.37	101.87
		Բարեկարգում				
1	27-164-1 27--165--1	Ճանապարհների միաշերտ խոշորահատիկ ա/բետոնից ծածկույթի իրականացում b= 3սմ	100 քառ.մ	1.95	259.37	505.77
2	27-164-2	Ճանապարհների միաշերտ մանրահատիկ ա/բետոնից ծածկույթի իրականացում b= 3սմ	100 քառ.մ	1.95	252.16	491.71
3	27-169	Մայթերի ա/բ ծածկի իրականացում 30մմ հաստ	100 քառ.մ	1.02	294.67	300.56
4		Բետոնե եզրաքարերի տեղադրում (150*300)մմ	գծ.մ	260	4.97	1291.93
		Բետոնե եզրաքարերի տեղադրում (200*60)մմ	գծ.մ	120	4.97	596.28
8	շուկա	Մարզահրապարակի արհեստական խոտածածկ ժապավենի,սոսնձի և այլ նյութերի հետ միասին,ռեգուլյոլի վրա /տեղադրումը և տեղափոխումը ներառված է գնի մեջ/	քառ.մ	1104.00	5.44	6010.94
		Բասկետբոլի վահանի կանգնակ				
		Հողային աշխատանքներ				
1	1-961	Բնահողի մշակում ձեռքով մինչև 20մ տեղափոխումով	խոր.մ	1.80	2.44	4.38
2	1-968	Բնահողի հետլիցք ձեռքով տեղափոխելով 20մ	խոր.մ	0.50	1.00	0.50
		Հիմքեր			0.00	0.00
3	6--2	Բետոնե կետային հիմքի իրականացում B-12,5	խոր.մ	1.30	49.28	64.06
		Կանգնակի տեղադրում			0.00	0.00
7	9--150	Մետաղական կանգնակի տեղադրում	տ	0.24	127.65	30.00
10	կալկուլ	Մետաղական կանգնակի արժեքը	հատ	2.00	49.33	98.66
11	33--82	Մետաղական կոնստրուկցիաների ներկում 2 անգամ	տ	0.24	12.16	2.86
14	Շուկա	Բասկետբոլի վահանի արժեքը օղակի և ցանցի հետ միասին /տեղադրումը և տեղափոխումը ներառված են գնի մեջ/	հատ	2.00	65.71	131.43
		Ֆուտբոլի դարպաս			0.00	0.00
		Հողային աշխատանքներ			0.00	0.00
1	1-961	Բնահողի մշակում ձեռքով մինչև 20մ տեղափոխումով	խոր.մ	3.60	2.44	8.77
2	1-968	Բնահողի հետլիցք ձեռքով տեղափոխելով 20մ	խոր.մ	1.00	1.00	1.00
		Հիմքեր			0.00	0.00
3	6--2	Բետոնե կետային հիմքի իրականացում B-12,5	խոր.մ	3.60	49.28	177.41
		Կանգնակի տեղադրում			0.00	0.00
7	9--150	Մետաղական դարպասի կանգնակների տեղադրում	տ	0.28	127.65	35.74
10	կալկուլ	Մետաղական դարպասի արժեքը	հատ	2.00	24.65	49.29
11	33--82	Մետաղական կոնստրուկցիաների ներկում 2 անգամ	տ	0.28	12.16	3.41
14	Շուկա	Դարպասի ցանց 7,5*2,5*1մ	զույգ	1.00	18.60	18.60

N/N	Աշխատանքի ենթակա ծախսերի շիֆրը	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակ	Արժեքը հազ.դրամ	
					Միավոր	Ընդամենը
	Պայմանագիր N11090111	Սպառման համակարգի միացումն էլեկտրական ցանցին /1500մ/	ծառայության			991.67
		Գույք և կահավորում				
1		Պատուհանների պաշտպանիչ ցանց 3500*6300	քառ.մ	250.00	2.00	500.00
2	շուկա	Շոգեբաղնիքի փայտյա վառարան	հատ	1.00	84.08	84.08
3		Հայելի մարզադահլիճի համար 800*1800	հատ	20.00	5.80	116.00
4		Մարզաներքնակ	հատ	5.00	30.00	150.00
5	Շուկա	Պլաստմասե նստարան	հատ	140.00	4.60	644.00

Ընդհանուրը	36397.76
Շահույթ 11 %	3730.32
Ընդամենը	40128.08
Չնախատեսված աշխատանքներ և ծախսեր 3 %	1129.27
Ընդամենը	41257.35
ԱԱՀ 20 %	8251.47
Ընդամենը	**49508.8**

Պ ա տ վ ի ր ա տ ու
ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> ՊՀ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011087112, ՀՎՀՀ 02553861

Տնօրեն _____ Մ. Քյուրքչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Արա և Այծեմնիկ>> ԲԲԸ
ք. Էջմիածին, Նար-Դոսի 3,
<<Արդշինբանկ>> ՓԲԸ,
<<Էջմիածին>> մասնաճյուղ
ՀՀ 247590129513-0040,
ՀՎՀՀ 04704351

Տնօրեն _____ Ա. Գրիգորյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Կ ա տ ա ր ո ղ
<<Խաչատուրյանի Բիլդինգ
Գրուպ>> ՍՊԸ
ՀՀ Արմավիրի մարզ, ք. Էջմիածին, Կույբիշև 4ա
<<ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ>> ՓԲԸ,
Հ/Հ 16017962400400,
ՀՎՀՀ 04715751

Տնօրեն _____ Ա. Խաչատրյան
(ստորագրություն)

Կ.Տ.